

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՄԻՋԵՎ

Աննա Հակոբյան

Երևանի պետական համալսարան

Սույն հոդվածի հիմնական նպատակն է պարզել թարգմանության տեսության և պրակտիկայի հարաբերակցությունը՝ հենվելով մեր ժամանակի հանրահայտ թարգմանաբանների ուսումնասիրությունների և դատողությունների վրա: Շատերի համար թարգմանությունը պարզ և սովորական գործունեություն է: Սակայն որոշ գիտնականների համար թարգմանությունը տեսության և պրակտիկայի փոխշահավետ համագործակցություն է: Թարգմանության պատմությունը անբաժանելի է թարգմանության մասին գրություններից: Որպեսզի թարգմանության տարբեր ձևերի վերաբերյալ տեսական դատողությունները լինեն հնարավորինս օբյեկտիվ, դրանք պետք է մեկնված լինեն գործնական թարգմանությունների օրինակներով:

Բանալի բառեր. թարգմանություն, թարգմանաբանություն, թարգմանիչ, տեսություն և պրակտիկա:

Ներածություն

Թարգմանության պրոբլեմատիկան վերջին տարիներին դարձել է այս ոլորտի մասնագետների մտահոգության առարկան: Այսպես, թարգմանությունն այլևս չի դիտարկվում որպես մի պարզ արդյունք. նկատվում է ավելի ու ավելի աճող հետաքրքրություն տեսագործական թարգմանության զարգացման նկատմամբ: Այսօր թարգմանությունը հանդիպում է գրեթե ամենուրեք մարդկային գործունեության մեջ: Եվ չնայած թարգմանությունը առկա է ամենուրեք, այսուհանդերձ փոքրաթիվ են նրանք, ովքեր կարող են հասկանալ և բացատրել այն իր ողջ բարդությամբ:

Շատերի համար թարգմանությունը պարզ և սովորական գործունեություն է, և *թարգմանել* նշանակում է «փոխել լեզուն», «մի լեզվի բառերը և նախադասությունները փոխարինել մեկ այլ լեզվի համարժեք բառերով և համարժեք նախադասություններով» (Gouadec 2004:5): Այս տեսակետից կարելի է ասել, որ բոլորն էլ ընդունակ են թարգմանություն կատարել: Սակայն, ինչպես իրավացիորեն նշում են որոշ թարգմանաբաններ, թարգմանությունը թարգմանչից պահանջում է միաժամանակ լեզուների խորը իմացություն, փորձ և մեծ պատասխանատվություն: Թարգմանչական գործը անառարկելիորեն մեծ զարգացում է ապրել, բայց չպետք է նկատի ունենալ միայն անտիպ տեքստերի թարգմանությունը, այլ պետք է նմանապես մտածել մեկ այլ ֆենոմենի՝ վերաթարգմանության մասին: Այլ կերպ ասած, գրական որոշ ստեղծագործությունների թարգմանությունները ենթակա են վերաթարգմանության (Gouadec 2004:5):

Վերջապես, կարևոր է պարզել տեսական և գործնական թարգմանության հարաբերությունը: Թարգմանությունը պետք է դիտել որպես շոշափելի և լուրջ ներդրում՝ վստահված իրազեկ պրոֆեսիոնալների:

Տեսության և պրակտիկայի հարաբերությունը

Թարգմանության պատմությունը բացահայտում է թարգմանության վերաբերյալ քննադատական միտքը: Թարգմանության պատմության մեջ տեսությունը սկզբունքորեն մշտապես հակադրվում էր գործնականին: «Վատ թարգմանությունը,- գրում է Վալտեր Բենյամինը,- ոչ էական բովանդակության ոչ ճշգրիտ փոխանցումն է»: Այստեղ փորձ է արվում վերջ դնել, զոնե սկզբունքների տեսանկյունից, թարգմանությանը վերաբերող անընդհատ ավելացող գաղափարների «անվերջությունը» (Benjamin: 2000):

Թարգմանության տեսությունները մշտապես տարբերակում են առաջադրել գործնական և գեղարվեստական թարգմանությունների միջև, չնայած այդ տարբերակման հարցն այնպես է բարձրացված, որ պրագմատիկ թարգմանություններն արժանանան ավելի մեծ ուշադրության, մինչդեռ գրական թարգմանությունների վերաբերյալ ժամանակի ընթացքում զարգացել են գանազան տեսություններ: Սակայն տեսության սահմանումը դեռ վերջնականապես հնարավոր չէ հրապարակել:

Խոսքը գնում է գործնականում այն լայն դաշտի մասին, որը չի կարող խստորեն շրջանակվել ուսումնասիրության որևէ ոլորտի սահմաններում: Այդ իսկ պատճառով Անտուան Բերմանն ու Ժան-Ռոնե Լամիրալը համարում են, որ թարգմանության ասպեկտները կազմում կամ ներկայացնում են թարգմանաբանության ուսումնասիրության կենտրոնը, մինչդեռ Ջորջ Ստայները թարգմանության հիմնական տեղը համարում է *հերմենևտիկան* (սա հետագայում կընդունի նաև Անտուան Բերմանը): Ժորժ Սուլենը մեկ այլ կարծիքի է. թարգմանությունը լեզվաբանության ճյուղերից մեկն է: Անրի Մեշոնիկը բավական մեծ թվով փաստարկներ է բերում ի վերջո ապացուցելու, որ թարգմանությունը պոետիկայի առարկան է: Ռոման Յակոբսոնը թարգմանությունը տեսնում է լեզվի տեսության մեջ: Նա այս ընտրությունը բացատրում է որպես պոետական կերպարափոխություն: Ուրիշ շատերը, հատկապես բանաստեղծները (Էզրա Փաունդ, Օկտավիո Պազ, Ժակ Ռուբո և այլոք...), նույն կարծիքի են, քանզի նրանք թարգմանության խորքում տեսնում են *բանաստեղծական վերարարում*, և ուրեմն այս երկու գործողությունները պատկանում են լեզվի տեսությանը (Depré 1999:7):

Անգամ իր «Գրական թարգմանության տեսություններն ու պրակտիկաները» աշխատության առաջաբանում Ումբերտո Էկոն, թվարկելով թարգմանության տեսության և պրակտիկայի վերջին տասնամյակների այսչափ արագ զարգացող պատճառները, գրում է. «...Հետաքրքրության այս աճի պատճառները բազմաթիվ են և նույն նպատակին ուղղված. նախ, համաշխարհայնացումը, որն անընդմեջ կապի մեջ է դնում տարբեր լեզուներ կրող անհատների և խմբերի, այնուհետև նշանագիտության զարգացումը, որի համար թարգմանական կոնցեպտը դառնում է կենտրոնական [...], վերջապես, տեղեկատվության ընդլայնումը, որը մղում է բազմաթիվ նորույթ հղացող մարդկանց ստեղծել և ավարտին հասցնել արհեստական թարգմանության մոդելներ, որտեղ թարգմանաբանական խնդիրը հանգուցային է, ոչ թե այն պատճառով, որ մոդելը չի աշխատում, այլ, որ չի աշխատում ամբողջ հզորությամբ» (Eco 2007):

Երբ խոսում են թարգմանության մասին, բնականաբար մտածում են թարգմանչի մասին և ակամա՝ թարգմանչական արվեստի մասին: Սրանից հետևում է, որ երբեք չպետք է դիտարկել այս երկուսը՝ տեսությունն ու պրակտիկան,

առանձին-առանձին, այլ ընդհակառակը՝ մեկ անբողջության մեջ, քանզի թարգմանչի և տեսաբանի միջև գոյություն ունի, այսպես ասած, փոխազդանքային և անհրաժեշտ համագործակցություն, որի միակ նպատակն է ապահովել թարգմանության հաջողությունը:

Թարգմանության տեսության բազմազանությունը

Թարգմանության բազմազան ձևերը, ինչպես նաև քննադատության մոտեցումները տարբեր են, որտեղից էլ բխում է թարգմանության խորքային մեխանիզմները հնարավորինս օբյեկտիվորեն վեր հանելու կարևորությունը: Չերակայությունը տալ նկարագրական մոտեցմանը /ինչպե՞ս թարգմանել/ ի վնաս նախօրոք ընդունված մոտեցմանը /ինչպե՞ս պետք է թարգմանել/, թե՞ գերադասել միայն տեսական մոտեցումը: Գրական թարգմանության դեպքում գրավոր թարգմանությունն է գերադասվում բանավորից: Այդ պատճառով էլ բանավոր թարգմանությունների վերաբերյալ ուսումնասիրություններն ավելի հազվադեպ են և ավելի ուշացած: Այսօր այդ պակասորդը լրացվում է, քանի որ զգացվում է դրա կարևորությունը (Oustinoff 2003:5):

Այս փոխադարձությունը տեսության և պրակտիկայի միջև, թարգմանիչների և տեսաբանների միջև նկատել է նաև Ինես Օստիօֆ Դեպրեն: Նա թարգմանաբանադատության հիմնադիրներից մեկն է, որի կարծիքով տեսությունն ու պրակտիկան միմյանց լրացնում են և միաժամանակ հակադրվում, որից և ծնվում է թարգմանաբանադատությունը (Եզրույթը՝ Ա. Հ.) (Depré: 1999). Թարգմանության պատմությունը անբաժանելի է թարգմանության մասին գրություններից, որոնց մեծամասնությունը բացահայտում է թարգմանության վերաբերյալ քննադատական միտքը: «Քննադատության հենց այս համատեքստում պետք է տեղավորել թարգմանության ժամանակակից անհամբերելի ուսմունքները» (Oustinoff 2003:5):

Իսկ Ումբերտո Էկոն շարունակում է. «Տեսականորեն դեռ շարունակում են պնդել թարգմանության անհնարիությունը, բայց գործնականում նրանք միշտ հանդիպում են Աքիլլեսի և կրիայի պատմությանը: Տեսության մեջ Աքիլեսը երբեք չի բռնելու կրիային, քանզի այդ անելու համար նա պետք է անցնի միջնագիծը, իսկ տեսության համաձայն միջնագիծը կարելի է միայն նեղացնել, և պարադոքսալորեն կրիան գերազանցում է հերոսին» (Eco 2007):

Ումբերտո Էկոն ցույց է տալիս, որ երբեմն թարգմանական տեսությունը կարող է դառնալ իդեալիստական՝ վտանգի ենթարկելով իր հարաբերությունը փորձի հետ, իր կապը գործնական թարգմանության հետ, որը պետք է անպայման գոյություն ունենա:

Թարգմանության պատմության մեջ ողջ աշխարհում չենք կարող գտնել հակադրման այդ սկզբունքը՝ մինչև 20-րդ դարի լեզվաբանությունը, որը կարողացավ բաժանել տեսությունը գործնականից՝ հավաստի դարձնելով տեսության ինքնավար գոյությունը: Պետք է ասել, որ նույնքան երկարախոս, որքան և անհավանական է հենց իրենց՝ թարգմանիչների դիրքորոշումը. ամեն ինչ անել բաժանելու՝ ազատ մտորելու ժամանակը և թարգմանչի ծանր պարտականությունը: Դրան էլ ավելացրած դպրոցական հակադրությունը կոնկրետի և վերացականի միջև՝ անընդունակ տարբերակում մտցնելու պատմական դատողությունների և տեսական նպատակների միջև (Benjamin 2000):

Իսկական թարգմանական տեսությունը պետք է ուղեկցված լինի թարգմանական պրակտիկայից վերցված մեծաթիվ օրինակներով: «Թարգմանաբա-

նության ուսումնասիրությունները հաճախ չեն գոհացնում ինձ,- գրում է Ումբերտո Էկոն,-քանզի տեսական բազում փաստարկները չեն լուսաբանվում բավարար քանակությամբ օրինակներով»: Նրա համար զարմանալի է, որ թարգմանության հետ անմիջական կապ չունեցող մեկը, որը երբևէ չի թարգմանել, փորձ չունի, կարող է շարադրել տեսություն, որը կվերաբերի թարգմանության բարդ գործընթացին: Այսուհանդերձ, նա նշում է որոշ գործեր, որոնք լի են օրինակներով, ինչպես ժորժ Ստայների «Բաբելոնից հետո» աշխատության դեպքում: Ըստ Ումբերտո Էկոյի թարգմանության տեսության մշակումը պահանջում է, որ նա, ով հավակնում է դառնալ թարգմանության տեսաբան, պետք է քննի և վերլուծի զգալի թվով թարգմանություններ և անցնի երեք փորձություն. «ստուգի ուրիշների թարգմանությունները, թարգմանի և թարգմանվի, կամ թարգմանված լինի իր թարգմանչի համագործակցությամբ» (Eco 2007:14):

Հարկ է ընդունել, որ թարգմանության վերաբերյալ առաջին տեսական նկատառումները հայտնվեցին բավականին ուշ և կատարվեցին հենց թարգմանիչների կողմից: Դրանք փաստորեն թարգմանության տեսության առաջին փորձերն էին: Թարգմանչի, վեպերի ու էսսեների հեղինակի, միաժամանակ հրատարակչական մեծ մասնագետի, նշանագիտության հարուստ փորձ ունեցող գիտնականի՝ Ումբերտո Էկոյի տեսակետը լավ կողմնորոշիչ է հասկանալու, թե ինչ է թարգմանության տեսությունը: Նա երկար ժամանակ աշխատակցել է իր գործերի թարգմանիչներին՝ նրանց տալով դիտողություններ, լուծումներ, հնարավոր ազատություններ թարգմանության ընթացքում: Նույնպիսի բարեբախտություն է ունեցել նաև Թ.Ս. Էլիոթը, երբ թարգմանում էր Սեն-Ժոն Պերսի «Անաբասիսը»: Երկար տարիների համառ աշխատանքը (1930-1959) վերջապես գոհացնում է հեղինակին, քանի որ Ս.ժ. Պերսը հիանալի էր տիրապետում նաև անգլերենին, և կարողանում էր ճշտել յուրաքանչյուր բառ կամ նախադասություն: Նա անսահման հիացմունք էր տածում անգլո-ամերիկյան բանաստեղծի նկատմամբ, որն, իր իսկ խոստովանությամբ, շատ բան է սովորել այդ համագործակցությունից:

Եզրակացություն

Մեր ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ տեսության և պրակտիկայի հարաբերությունը դարձել է համընդհանուր քննարկման առարկա, չնայած դեռևս շատ դժվար է միանշանակ սահմանել «թարգմանությունը» որպես ինքնուրույն գիտակարգ: «Ի՞նչ է թարգմանությունը» հարցի պատասխանները հաճախ հակասական են եղել, քանզի յուրաքանչյուր հեղինակ սկզբունքորեն առաջ էր քաշում թարգմանչական գործունեության իր հայեցակարգը, առանց հաշվի առնելու մյուսների տեսակետները: Բայցևայնպես, թարգմանությունը սահմանվում է, թեպետ սահմանման ձևերը բավական տարբեր են:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Benjamin, W. (2000) *Oeuvre I, La tâche du traducteur*. Paris: Gallimard, Folio.
2. Eco, U. (2007) *Dire presque la même chose: expériences de traduction*. / trad. de l'italien, Paris: Grasset.

3. Gouadec, D. (2004) *Faire traduire*. Paris: La maison du dictionnaire.
4. Mounin, G. (1963) *Les problèmes théorique de la traduction*. Paris: Gallimard.
5. Oseki-Dépré, In. (1999) *Théories et pratiques de la traduction littéraire*. Paris: Armand Colin.
6. Oustinoff, M. (2003) *La traduction*. Paris: Que sais-je?
7. Perse, St-J. (1977) *Œuvres Complètes*. Paris: Gallimard, Pléade.

Перевод между теорией и практикой

Главная цель данной статьи заключается в разьяснении взаимоотношения теории и практики перевода, возросший интерес к которому стал серьезной задачей для специалистов в этой сфере. Перевод больше не воспринимается как продукт, как результат процесса перевода и, более того, он стал важным объектом исследований, которое имеет свое место среди других дисциплин.

Translation between Theory and Practice

The main aim of this article is to reveal the growing interest in studying the complex interrelationship between the theoretical and practical aspects of translation. The latter is no longer perceived as a simple product, merely as a result of the act of translating. Moreover, it has become an important subject of study having its unique place and importance among other disciplines.